ԿԱՐԾԻՔ

Ամալյա Գրիշայի Սահակյանի «Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ» խորագրով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 151 համակարգչային էջ է:

Ժամանակակից կրթական համակարգի զարգացման պայմաններում կրթության առաջնահերթ խնդիրներից մեկը դառնում է սովորողների ստեղծագործական ներուժի բացահայտումն ու զարգացումը: Հատկապես կարևոր է այս խնդիրը կրտսեր դպրոցական տարիքում, երբ ձևավորվում են սովորողի ճանաչողական հետաքրքրությունները, մտածողության հիմնական առանձնահատկությունները և անձնային որակները: Այս համատեքստում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդիրը ձեռք է բերում առանձնահատուկ արդիականություն և պահանջում է գիտական հիմնավորված մոտեցումներ:

Ամալյա Գրիշայի Սահակյանի ներկայացրած ատենախոսությունը նվիրված է վերոնշյալ կարևոր հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրմանը: Աշխատանքը նպատակաուղղված է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետ ուղիների բացահայտմանը՝ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների կիրառման միջոցով:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը ներկայացնում է հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը՝ վերլուծելով հայրենական և արտասահմանյան գիտամանկավարժական գրականությունը: Կատարված է առկա տեսությունների և

մոտեցումների համակողմանի քննություն, առանձնացված են դրանց դրական կողմերը և բացահայտված են առկա բացերն ու չլուծված խնդիրները: Այս վերլուծության հիման վրա հստակ ձևակերպված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան: Առաջադրված գիտական վարկածը տրամաբանականորեն բխում է ուսումնասիրված նյութից և ամբողջությամբ համահունչ է աշխատանքի նպատակներին:

Հեղինակը հիմնավորել է հետազոտության մեթոդաբանական հիմքերը՝ հենվելով ժամանակակից մանկավարժության և հոգեբանության ձեռքբերումների վրա: Աշխատանքում կիրառված են տարբեր փոխներգործուն մեթոդներ՝ տեսական վերլուծություն, համեմատություն, ընդհանրացում, ինչպես նաև հետազոտական աշխատանք, որոնք ապահովում են ստացված արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը: Ներկայացված են նաև աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը, որոնք արտահայտում են հետազոտության ներդրումը տվյալ ոլորտում:

Ատենախոսությունը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ և բաղկացած է երկու գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն ավարտվում է համապատասխան եզրակացություններով:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդրի գիտատեսական հիմնավորումը»** , նվիրված է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման տեսական հիմքերի բացահայտմանը: Հեղինակը բավական հիմնավորված վերլուծում է «ստեղծագործական կարողություններ», «ստեղծագործական մտածողություն», «ստեղծագործական գործունեություն» հասկացությունները՝ ներկայացնելով դրանց տարբեր մեկնաբանությունները և առաջարկելով դրանց համակարգված ընկալում: Կարևոր է, որ հեղինակը փորձում է հստակեցնել նշված հասկացությունների բովանդակությունը և բացահայտել դրանց կառուցվածքային բաղադրիչները:

Հարկ է նշել, որ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկություններին և նրանց

ճանաչողական գործունեության կազմակերպման պայմաններին: Հեղինակը հիմնավորում է, որ ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնների համադրմամբ՝ ներառյալ ուսուցման բովանդակությունը, մեթոդները, սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Երկրորդ գլուխը՝ **«Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հիմնավորման ուղղված հետազոտության արդյունքների վերլուծությունը»** նվիրված է հետազոտության հետազոտական հատվածին և առաջարկված մանկավարժական մոտեցումների արդյունավետության ստուգմանը: Հեղինակը ներկայացնում է.

- իրականացված հետազոտական աշխատանքը,
- դրա կազմակերպման փուլերը,
- կիրառված մեթոդները և ստացված արդյունքները:

Այս երեք կետերի կատարված վերլուծության արդյունքում հիմնավորվում է, որ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է սովորողների ստեղծագործական ակտիվության բարձրացմանը, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը և ուսումնական գործընթացի արդյունավետության աճին:

Աշխատանքի առավելություններից պետք է նշել հետևյալը, որ հետազոտության ընթացքում հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել սովորողների դրդապատճառների ձևավորմանը, նրանց ճանաչողական պահանջմունքների զարգացմանը և ուսումնական գործունեության մեջ ակտիվ ներգրավմանը: Նշվում է, որ ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը պետք է հիմնվի սովորողների փորձի, հետաքրքրությունների և հուզական ոլորտի վրա ներգործելու սկզբունքների վրա:

Ինչպես նաև բավական հետաքիրիր են սեստղծագործական առաջադրանքները և դասերի նմուշօրինակները:

Արժևորում ենք նաև, որ աշխատանքում առաջարկված համալիրը և մեթոդական լուծումները կարող են կիրառվել ոչ միայն կրտսեր դպրոցում, այլև կրթական գործընթացի այլ փուլերում և տարբեր առարկաների դասավանդման ընթացքում: Սա ընդգծում է հետազոտության գործնական նշանակությունը և կիրառելիությունը: Հետազոտությունն առանձնանում է իր թեմատիկ արդիականությամբ, տեսական և գործնական նշանակությամբ:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսությանը և ամբողջականորեն արտացոլում է դրա բովանդակությունը:

Միևնույն ժամանակ, ատենախոսության մեջ նկատվում են որոշ թերություններ, ինչպես նաև դիտարկումներ, որոնք, սակայն, չեն նվազեցնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը:

Մասնավորապես՝

1. Առաջին եզրակացությունը ձևակերպված է թույլ, քանի որ ցանկալի կլիներ «ստեղծագործական կարողությունները» ավելի մանրամասնել:
2. Գիտական եզրակացությունների ձևակերպումները պետք է լինեն հստակ, հակիրճ: Մենք կնախընտրեինք, որ եզրակացության 7-րդ և 8-րդ կետերը ձևակերպվեին նախ՝ հակիրճ՝ տալով ավելի գործնական լուծումներ
3. Տարրական դպրոցում աշակերտը ունա՞կ է հետազոտություն կատարելուն. եթե այո՛, ապա՝ ի՞նչ տեսակի:
4. Ատենախոսության մեջ և սեղմագրում խոսվում է համալիրի մասին, սակայն, կարծես ատենախոսության գլուխներում այն իր տեղը չի գտել:
5. Ա.Սյունեցին, որ հրաշալի մտածող է, ինչպե՞ս է նպաստել 21-րդ դարի տարրական դպրոցում աշակերտի մոտ ստեղծագործական կարողություններ զարգացնելուն: Բացի այդ, ատենախոսության մեջ չգտնվեց հղումը. գուցե վրիպում է:
6. Աշխատանքում առկա են գիտական ձևակերպումների անհարթություններ, ինչպես նաև ուղղագրական և տեխնիկական վրիպումներ / էջ 4,11,20,21, 23,47,52,137,139,141 և այլն/

Առաջարկ՝

Ապագայում, շարունակելով այս աշխատանքը, տեսական հարթակից տեղափոխել գործնական՝ստեղծելով համակարգված առաջադրանքներ:

Ընդհանուր առմամբ, ատենախոսությունը ավարտուն, համակարգված և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որը արտացոլում է հեղինակի գիտամանկավարժական պատրաստվածությանը, ինչպես նաև ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք իրականացնելու կարողությունները:

Եզրակացություն

Ամալյա Գրիշայի Սահակյանի **«Կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացումը նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ»** խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությանը, ինչպես նաև ատենախոսությունը համապատսխանում է ՀՀ ԲԿԳԿԻ-ի գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
Ֆրանսերենի և ռոմանական բանասիրության ամբիոնի ավագ դասախոս,
մանկավարժական գիտությունների թեկնածու՝ **Հ.Բլբուլյան**

Հ.Բլբուլյանի ստորագրությունը հաստատում եմ:
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
գիտական քարտուղար՝ **Հ.Փիլավջյան**
17.04.2026թ.